ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

21.01.2013թ.

գ. Գետաշեն

Գետաշեն համայնքի ղեկավարի 2012 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ

Գետաշեն համայնքի 2012թ. բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ հողի հարկ 11376.0 հազար դրամի դիմաց 811360.5 հազար դրամ կամ 99.9%,

բ/ գույքահարկ 2138.1 հազար դրամի դիմաց 2563.2 հազար դրամ կամ 119 %,

գ/ վարձակալական վճարներ 2531.0 հազար դրամի դիմաց 2557.5 հազար դրամ կամ 101 %,

դ/ տեղական տուրքեր՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ 112.0 հազար դրամի դիմաց 108.5 հազար դրամ կամ 96 %,

ե/ ծառայություններից գանձվող վճարներ՝ 199.7 հազար դրամ

զ/ պետության կողմից դոտացիա 18381.7 հազար դրամի դիմաց 18381.7 հազար դրամ կամ 100%

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ աշխատավարձի վճարում 14304.0 հազար դրամ

բ/ սոց. վճարների վճարում 2601.6 հազար դրամ

գ/ ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 11356.5 հազար դրամ,

դ/ դրամաշնորհներ Գետաշենի Միջն. Դպրոց ՊՈԱԿ-ին 1320.0 հազար դրամ,

ե/ սոց օգնություն 3245.0 հազար դրամ,

զ/ ֆոնդային բյուջեից հիմնական միջոցների ձեռք բերում 1236.0 հազար դրամ:

2012 թվականի ընթացքում աշխատավարձի և սոց վճարի պարտք չի գոյացել:

Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց, որ շարունակելու է բարեկարգել և ավազապատել ներհամայնքային ճանապարհների մնացած մասը:

Հաճախակի կազմակերպելու է սոց. կուլտ. միջոցառումներ և աջակցելու է համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին: 2013 թվականի ընթացքում ևս համայնքի բյուջեից 50.0 հազարական դրամ կհատկացվի համայնքի այն ընտանիքներին, որտեղ մահ կգրանցվի:

Գյուղապետ Գ. Հովհաննիսյանի կողմից համայնքի բնակիչներին տեղեկացվեց համայնքում կատարված աշխատանքների ընթացքը, ճանապարհների մաքրման և բարեկարգման, համայնքի գազաֆիկացման ինչպես նաև համայնքի սոցիալ տնտեսական զարգացման և կատարվելիք այլ նախագծերի մասին:

2012 թվականին համայնքի բնակիչներից ստացված՝ 54 դիմում-բողոքներ քննարկվել են և տրվել են համապատասխան լուծումներ և պատասխաններ: 2012թվականին համայնքը ստացել է՝ 120 պաշտոնական գրություն, որոնց պատշաճ կերպով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Անցկացվել է ավագանու 7 նիստ, կայացվել է 31 որոշում: Արձանագրվել է համայքնի ղեկավարի 25 կարգադրություն, կայացվել է համայնքի ղեկավարի 11 որոշում: Համայնքի անդամների 25 դիմումների հիման վրա կատարվել է՝ պտղատու այգիների և խաղողի այգիների քանդման 25 գործընթացներ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ հատկապես մեծ արձագանք են ստացել Գետաշեն համայնքում աշխատած, այժմ հանգստի գնացած, մանկավարժների մեծարմանը նվիրված ցերեկույթը, Համայնքում 2012 թվականին ծնված բոլոր երեխաների օրհնության միջոցառումը, Մարտի 8-ին ամբողջ թոշակառու կանանց համար կազմակերպված միջոցառումն ու նվերների տրամադրումը և մի շարք այլ մեծ միջոցառումներ, որոնք լուսաբանվել են «ԱՐՄԵՆԻԱ» հեռուստաընկերության կողմից:

Առողջապահության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Բուժ անձնակազմի և գյուղապետի անմիջական մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելու ջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցերում: Գետաշենի բուժ ամբուլատորիայում գրանցված բնակչության թիվը կազմում է 2166 մարդ, 2012 թվականին բուժամբուլատորիա հաճախումների թիվը կազմել է 5436՝ որից 3851-ը երեխաների հաճախումներն են: Գրանցվել է 384 տնային կանչեր, պրոֆիլակտիկ նպատակներով ապասարկվել է 203 մարդ, տարին մեկ անգամ համայնք են հրավիրվում բժիշկ մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհրդատվություն տալու նպատակով: Բացի այս ամենից Գետաշենի բուժամբուլատորիայում գործում է ընտանեկան բժշկություն, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի անմիջական հսկողության ներքո:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1/ Մանկապարտեզի վերագործարկում:

2/ Խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը՝ որը 1965 թ. է շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

3/ Մշակույթի տան հիմնանորոգում:

4/ Համայնքի ընդհանուր գազաֆիկացում:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գագիկ Հովհաննիսյան